ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №120-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 26-ի իններորդ նստաշրջանի առաջին հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի 3-րդ փողոց, թիվ 26 հասցեում գտնվող 05-082-0077-0057 կադաստրային ծածկագրով 0.0794 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու համաձայնություն տալու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 2 հասցեում գտնվող 05-045-0046-0002 կադաստրային ծածկագրով 0.1236 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու համաձայնություն տալու և համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի №19-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին.
   4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիքճ բնակավայրում գտնվող 05-039-0219-0013 կադաստրային ծածկագրով 0.16105 հա և 05-039-0219-0007 կադաստրային ծածկագրով 0.2 հա մակերեսներով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին.
6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բնակիչներին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից շինություններ կառուցելու համաձայնություն տալու մասին.
7) Համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների (հողամասերի) սահմաններին կից Մարտունի համայնքի բնակիչների կողմից իրենց հողամասերում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացմանը համաձայնություն տալու մասին.
8) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N26-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
9) Մարտունու համայնքապետարանի վարչական շենքից «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Մարտունու տարածքային ներկայացուցչությանը անհատույց, մշտական օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու համաձայնություն տալու մասին.
10) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան և Երևանյան փողոցների հիմնանորոգման աշխատանքների համար սահմանված տեղական տուրքի նկատմամբ արտոնություն կիրառելու մասի.
11) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վերին Գետաշեն բնակավայրի մշակույթի տան առաջին հարկի 146.2 քմ մակերեսով թիվ 15 սենյակն անհատույց օգտագործման իրավունքով երեք տարի ժամկետով «Սևան» գյուղական մարզական հասարակական կազմակերպության Մարտունու մանկապատանեկան մարզադպրոցին տրամադրելուն համաձայնություն տալու մասին.
12) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Ի. Խաչատրյան փողոց, 1-ին փակուղի, թիվ 6/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-003-1076-0002 կադաստրային ծածկագրով 0.0255 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.
13) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 05-062-0671-0009 կադաստրային ծածկագրով 5.0 հա մակերեսով արոտավայրը և 05-062-0637-0002 կադաստրային ծածկագրով 7.9365 հա մակերեսով վարելահողը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.
14) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝

պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.5 հա մակերեսով խոտհարքը, 5.0 հա մակերեսով արոտավայրը և 2.0 հա մակերեսով խոտհարքը վարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին.

15) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-013-0303-0037 կադաստրային ծածկագրով 0.6008 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

16) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-034-0303-0005 կադաստրային ծածկագրով 2.1172 հա և 05-034-0303-0006 կադաստրային ծածկագրով 0.7599 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

17) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար, Զոլաքար, Աստղաձոր, Ներքին Գետաշեն բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի և «Մարտունու մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին.

18) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Սմբատ Միերյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզիկներ Կարեն Սամվելի Զախարյանին, Էլեն Արսենի Բարսեղյանին և Ծովինարի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտ Գրիգոր Սասունի Մինասյանին գումար տրամադրելու մասին.

19) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի մի խումբ բնակիչների համար փոխադրամիջոցների և անշարժ գույքերի հարկի գծով արտոնություններ սահմանելու մասին.

20) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի երկրորդ հերթական նիստի օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №121-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 26 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-082-0077-0057 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0794 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի սեպտեմբերի 2-ի N02//7162-2025 գրությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի 3-րդ փողոց, թիվ 26 հասցեում գտնվող 05-082-0077-0057 կադաստրային ծածկագրով 0.0794 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ բժշկական ամբուլատորիա կառուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №122-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-045-0046-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.1236 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի №19-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի» 37-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 2 հասցեում գտնվող 05-045-0046-0002 կադաստրային ծածկագրով 0.1236 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ բժշկական ամբուլատորիա կառուցելու նպատակով:
2. Ուժը կորցրած ճանաչել Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 1-ին փողոց, թիվ 18 հասցեում գտնվող 05-045-0010-0207 ծածկագրով հողատարածքը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու համաձայնություն տալու մասին» №19-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №123-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում սկսել 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթաց:
2. Մարտունի համայնքի 2026 թվականի բյուջեում նախատեսել 40000000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2026 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ մինչև 40000000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամ:
4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:
6. Համայնքի ղեկավարին՝
   1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2026 թվականի միջնաժամկետ ծախսային ծրագրում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում.
   2) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -2

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

Հավելված
Մարտունի համայնքի ավագանու
2025 թվականի սեպտեմբերի 26-ի №123-Ա որոշման

ՁԵՎԱՆՄՈՒՇ

ԱՂՅՈՒՍԱԿ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

N	Առաջարկի անվանումը	ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ						Տեղափոխվել է հանրային քննարկումների և լսումների փուլ
		Իրականացվելու է համայնքի տարածքում	Իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակում	Իրականացման բյուջեն չի գերազանցում ավագանու հատկացրած սահմանաչափը	Հանդիսանում է նոր առաջարկություն[1]	Տեխնիկապես հնարավոր է իրականացնել		
1		Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում		Այո/ոչ
2								
3								

(այդ թվում՝ համայնքի տվյալ տարվա բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ առաջարկ-նախագծերի համընկնման բացառման) և ներկայացվող յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար անհրաժեշտ գումարի առավելագույն սահմանաչափը:

[1] Առաջարկը իրականացման փուլում չէ, ընդգրկված չէ համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում, տվյալ տարվա աշխատանքային պլանում և բյուջեում, չի իրականցվելու այլ կազմակերպությունների կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №124-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2025 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) բյուջեի պահուստային ֆոնդից ընդամենը 650100.0 հազար դրամ հատկացնել համայնքի բյուջեի ֆոնդային մաս և բաշխել հետևյալ ոլորտներին.
   ա. «Ոռոգման համակարգերի վերանորոգում և շահագործում» նախահաշվի 5112 ծախսային հոդվածին 254800.0 հազար դրամ՝ Մարտունի համայնքում նոր ոռոգման համակարգեր կառուցելու նպատակով,
   բ. «Ջրամատակարարում և ջրահեռացում» նախահաշվի 5112 հոդվածին 145200.0 հազար դրամ՝ Մարտունի համայնքում նոր խմելու ջրագծեր և օրվա կարգավորիչ ջրամբարներ կառուցելու նպատակով,
   գ. «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի 5113 հոդվածին 55100,0 հազար դրամ՝ Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման, բակային հատվածի բարեկարգման, ինչպես նաև գույքի ձեռքբերման ու կահավորման նպատակով,
   դ. «Փողոցների լուսավորում» նախահաշվի 5112 հոդվածին 120100.0 հազար դրամ՝ Մարտունի համայնքում նոր լուսավորման համակարգեր կառուցելու նպատակով,

ե. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 5112 հոդվածին 72000.0 հազար դրամ՝ Ծակքար բնակավայրում հանդիսությունների սրահ կառուցելու նպատակով,
զ. «Գազաֆիկացում» նախահաշվի 5113 հոդվածին 1000.0 հազար դրամ՝ Ծովասար բնակավայրում գազատար խողովակների վերատեղադրման նպատակով,
է. «Պաշտպանություն» նախահաշվի 5129 հոդվածին 1900.0 հազար դրամ՝ համայնքի էլեկտրական շչակների թվային կառավարման, հսկման համակարգերի ձեռքբերման և տեղադրման նպատակով:
2) Համայնքի բյուջեի «Ապարատի պահպանման ծախսեր» նախահաշվի 4251 հոդվածից պակասեցնել 15200.0 հազար դրամ և հատկացնել.
ա. «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի 4251 հոդվածին 11000.0 հազար դրամ՝ Մարտունի համայնքի Երանոս, Ծովասար, Վաղաշեն բնակավայրերի մանկապարտեզների շենքերի ընթացիկ վերանորոգման նպատակով,
բ. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 4241 հոդվածին 4200.0 հազար դրամ՝ Մարտունի համայնքի բնակավայրերի վարչական տարածքներում խմելու-կենցաղային նպատակով օգտագործվող ջրաղբյուրների վերաբերյալ հիդրոերկրաբանական տեղեկատվություններ և անձնագրեր ստանալու նպատակով:
3) «Փողոցների լուսավորում» նախահաշվի 5121 հոդվածից պակասեցնել 25000.0 հազար դրամ, «Կենսաբազմազանություն և բնության պաշտպանություն» նախահաշվի 5131 հոդվածից պակասեցնել 15000.0 հազար դրամ և հատկացնել «Կեղտաջրերի հեռացում» նախահաշվի 5113 հոդվածին՝ Մարտունի համայնքի Երևանյան և Մյասնիկյան փողոցների կոյուղագծերի վերանորոգման նպատակով:
Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017 թվականի N526-Ն որոշման 23-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթները՝ տալ համաձայնություն գնման ընթացակարգը կազմակերպել մեկ անձից:
4) «Կենսաբազմազանություն և բնության պաշտպանություն» նախահաշվի 4657 հոդվածից պակասեցնել 12000.0 հազար դրամ, «Ոռոգման համակարգերի վերանորոգում և շահագործում» նախահաշվի 4657 հոդվածից պակասեցնել 12000.0 հազար դրամ, «Գյուղատնտեսություն» նախահաշվի 4657 հոդվածից պակասեցնել 15000.0 հազար դրամ, «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» նախահաշվի 4657 հոդվածից պակասեցնել 12000.0 հազար դրամ, «Գեղարվեստի դպրոց» նախահաշվի 4657 հոդվածից պակասեցնել 12000.0 հազար դրամ և հատկացնել «Ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի 4251 հոդվածին՝ Մարտունի քաղաքի Երևանյան և Մյասնիկյան ասֆալտապատ փողոցների փոսալցման, գծանշման և կահավորման նպատակով:
5) «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 4269 հոդվածից պակասեցնել 10000.0 հազար դրամ, 4657 հոդվածից պակասեցնել 9000.0 հազար դրամ, «Այլ մշակութային միջոցառումներ» նախահաշվի 4267 հոդվածից պակասեցնել 14000.0 հազար դրամ և հատկացնել.

ա. «Մշակույթի տներ և ակումբներ» նախահաշվի 4269 հոդվածին 1000.0 հազար դրամ՝ հատուկ նպատակային ապրանքներ գնելու նպատակով,
բ. «Ոռոգման համակարգերի վերանորոգում և շահագործում» նախահաշվի 4252 հոդվածին 1000.0 հազար դրամ՝ մեքենասարքավորումների (խորքային հորերի մղիչ պոմպեր) վերանորոգման նպատակով,
գ. «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի 4267 հոդվածին 31000.0 հազար դրամ՝ Մարտունի համայնքի մանկապարտեզների համար կենցաղային ապրանքներ և սննունդ գնելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -5

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №125-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՔՃ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-039-0219-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.16105 ՀԱ ԵՎ 05-039-0219-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.2 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՍՏԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի №1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 29-ի №2/փ-291 դրական եզրակացությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-10 թաղամասի 1-ին փողոց, թիվ 40 հասցեում գտնվող, Շահեն Ռուստամի Գեղամյանին կառուցապատման իրավունքով տրված 05-039-0219-0013 կադաստրային ծածկագրով 0.16105 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-10 թաղամասի 1-ին փողոց, թիվ 39 հասցեում գտնվող, Հայկ Ռուստամի Գեղամյանին կառուցապատման իրավունքով տրված 05-039-0219-0007 կադաստրային ծածկագրով 0.2 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար

նախատեսված գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №126-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻ (ՀՈՂԱՄԱՍԻ) ՍԱՀՄԱՆԻՆ ԿԻՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 133-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝
   1) Լարիսա Արմենակի Իսպիրյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին մոտ իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Գետափնյա թաղամասի 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 4 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում գոյություն ունեցող բնակելի տան վրա կառուցել մանսարդային հարկ.
   2) Շիրազ Արթուրի Գուլեյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից իր՝ Մարտունի քաղաքի Գ. Նժդեհի փողոց, թիվ 17 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել բնակելի տուն.
   3) Դավիթ Համլետի Դավթյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից իր՝ Մարտունի քաղաքի

Նարեկացու փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 1 հասցեում գտնվող հողամասում կառուցել ավտոտնակ.

4) Աշոտ Հենզելի Սիմոնյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին մոտ իր՝ Զոլաքար բնակավայրի 1-ին փողոց, թիվ 18 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ավտոտնակ.

5) Բավական Սուրիկի Հայրապետյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին մոտ իր՝ Զոլաքար բնակավայրի 1-ին փողոց, թիվ 24 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել բնակելի տուն.

6) Արմեն Յուրիկի Մարտիկյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին մոտ իր՝ Զոլաքար բնակավայրի 23-րդ փողոց, թիվ 9 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ավտոտնակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №127-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝
   1) Ջեմմա Աղվանի Իսպիրյանի կողմից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Երիտասարդական փողոց, 7-րդ նրբանցք, թիվ 16 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին մոտ ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.
   2) Հակոբ Ռաֆիկի Հարիկյանի կողմից Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի Վարդաձորի խճուղի, 1-րդ փակուղի, թիվ 2 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

3) Ռուստամ Հրաչիկի Հարիկյանի կողմից Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի 7-րդ փողոց, թիվ 40 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №128-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N26-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի ««Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին» N26-Լ որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

Կազմված է «____» _____2025 թ.
Բաղկացած է _____ էջից:
Տպագրված է ընդամենը —— օրինակ:
Օրինակ N__

Հաստատված է՝
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Մարտունի համայնքի ավագանու
2025 թվականի սեպտեմբերի 26-ի 128-Լ
որոշմամբ:
Համայնքի ղեկավար

_____ Հ. Հովեյան

Գրանցված է՝
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրում
Գրանցման N _____
ՀՎՀՀ _____
«____» _____20___ թվականին

գրանցված կանոնադրության թիվ __
փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից՝

«____» _____2025 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

(Նոր խմբագրություն)

2025 թվական

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի (այսուհետ՝ համայնք) «Մարտունու համայնքապետարանի աշխատակազմ»-ը (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի միջոցով համայնքի ղեկավարը և օրենքով, ու Մարտունի համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև ավագանին կազմակերպում են իրենց գործունեությունը:
2. Աշխատակազմը հանդիսանում է «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.687376), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Աստղաձորի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.00990), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ղեկավարի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.00916), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի համայնաքապետարանի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.1167565), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոսի համայնքապետարանի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.00733), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ /գյուղապետարան/» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.01015), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճքի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.00999), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծակքարի գյուղապետարանի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.00928), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ /գյուղապետարան/» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.01016), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ /գյուղապետարան/» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.00851), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ /գյուղապետարան/» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.01028), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մադինայի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.01014), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.00910), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշենի համայնքապետարանի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.00980), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդաձորի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ /գյուղապետարան/» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.128798), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.00985), «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի գյուղակապետարանի աշխատակազմ» ՀՄ (գրանցման համար՝ 76.180.00987) իրավահաջորդը:
3. Աշխատակազմն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության «Սահմանադրությամբ», Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով», «Պետական կառավարչական հիմնարկների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով, իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն, որը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:
5. Աշխատակազմի անվանումն է՝
   1) հայերեն լրիվ՝ «Մարտունու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ,
   2) հայերեն կրճատ՝ «Մարտունի» ՀԿՀ,
   3) ռուսերեն լրիվ՝ "Мартуни" муниципальное административное учереждение,
   4) ռուսերեն կրճատ՝ "Мартуни" МАУ,
   5) անգլերեն լրիվ՝ "Martunui" community administration office,
   6) անգլերեն կրճատ՝ "Martuni" CAO:
6. Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների ու ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվներ, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:
7. Աշխատակազմը անձամբ չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող են գանձվել պետական և տեղական տուրքեր, տեղական վճարներ՝ օրենքով և (կամ) ավագանու սահմանված չափով և կարգով:
8. Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի, Շահումյան փողոց 2, փոստային դասիչ՝ 14/01:
9. Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ, որպես հայցվոր կամ պատասխանող:
10. Աշխատակազմը կազմված է կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից (այսուհետ՝ ստորաբաժանումներ):
11. Աշխատակազմի նպատակն ու խնդիրը համայնքի ղեկավարի ու ավագանու՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքի (ղեկավարի) մասնակցության ապահովումն է:
12. Ավագանին և համայնքի ղեկավարը՝ աշխատակազմի միջոցով, համայնքում իրականացնում են օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունները, համակարգում համայնքի ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ համայնքային կազմակերպություններ) գործունեությունը, կազմակերպում հանրապետական գործադիր մարմինների և դրանց համապատասխան տարածքային ծառայությունների հետ հարաբերությունները:
13. Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում համայնքը:
14. Աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
15. Աշխատակազմը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ենթակա է հաշվառման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

16. Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ օրենքով, այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում՝ անձամբ և իր տեղակալների միջոցով, որոնք գործում են համայնքի ղեկավարի անունից, համապատասխանաբար համակարգում են աշխատակազմի ստորաբաժանումների, կազմակերպությունների աշխատանքները և պատասխանատվություն են կրում իրենց համակարգման ոլորտում գործող ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետ կազմակերպման և անհրաժեշտ արդյունքների ապահովման համար:
17. Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:
18. ***Համայնքի ղեկավարը՝***
    1) հրավիրում և վարում է ավագանու նիստերը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով.
    2) նորմատիվ իրավական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղում: Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքներում սույն կետով նախատեսված նորմատիվ ակտերը երկօրյա ժամկետում տեղադրվում են կայքում.
    3) համայնքի զարգացման ծրագրերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.
    4) մշակում և ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի տարեկան աշխատանքային պլանը, դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունը.
    5) տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը, դրանցում առաջարկվող փոփոխությունները.
    6) հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը.
    7) աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքում.
    8) համայնքային ծառայության մասով աշխատակազմի կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագիծը և դրանում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.
    9) աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերն ու դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.
    10) համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

11) համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.
12) շանակում և ազատում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի քարտուղարին, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին
13) համայնքի ավագանու որոշմամբ նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով: Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված մարմինը: Համայնքի բնակավայրերում գտնվող համայնքային հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելիս և պաշտոնից ազատելիս խորհրդակցում է վարչական ղեկավարի հետ: Ավագանու կողմից երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում համայնքի ղեկավարը նշանակում է կատարում առանց համաձայնեցնելու ավագանու հետ: Մինչև համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի կայացումը համայնքի ղեկավարը կարող է նշանակել համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով: Եթե հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ երեք ամիս ժամկետով. Սույն կետով սահմանված կարգավորումները չեն տարածվում առողջապահական՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների վրա: Առողջապահական համայնքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ղեկավարին համայնքի ղեկավարը նշանակում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերին համապատասխան
14) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի կազմում ընդգրկված, 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրում վարչական ղեկավար ունենալու կամ բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը մեկ այլ բնակավայրի վարչական ղեկավարին վերապահելու մասին.
15) հանդես է գալիս տեղական հանրաքվե նշանակելու նախաձեռնությամբ.
16) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընդունում է տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշում.
17) ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ծախսերի ֆինանսավորման մասին որոշման նախագիծ.
18) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

19) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.
20) կնքում է Հայաստանի Հանրապետության համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ պայմանագրերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու վավերացմանը: Ավագանու հաստատմանն է ներկայացնում միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծերը.
21) համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը.
22) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային և հողաշինարարական փաստաթղթերը կամ դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին որոշում ընդունելու վերաբերյալ.
23) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին.
24) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների մասով պետական ճանապարհային մարմնի, իսկ երթևեկության անվտանգության մասով՝ պետական լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման.
25) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում առաջարկ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ.
26) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի անվանման և վերանվանման ենթակա փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկներն ու կազմակերպությունները և օրենքով սահմանված կարգով ներկայացնում է գրանցման (բացառությամբ պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների).
27) սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը, տալիս է համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման թույլտվություն.
28) սահմանված կարգով տալիս է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվություն, ինչպես նաև համայնքի բնակավայրերում այդ թույլտվության տրամադրումը կարող է լիազորել վարչական ղեկավարին.
29) տալիս է համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշան, անվանում) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն.
30) իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ.

31) ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում.
32) օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր.
33) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության.
34) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը.
35) տեղական՝ շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, ավանային և գյուղական խորհուրդների և նրանց գործադիր մարմինների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերի պահանջների կատարման համար անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ է կատարում համապատասխան ակտերում կամ ուժը կորցրած ճանաչում տեղական՝ շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, ավանային և գյուղական խորհուրդների և նրանց գործադիր մարմինների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերը.
36) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրներ.
37) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև բնածին և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցման ու հետևանքների վերացման, սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված աշխատանքների կազմակերպմանը և այդ ուղղությամբ ձեռնարկում համապատասխան միջոցներ.
38) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական հակակոռուպցիոն ծրագրի նախագիծը.
39) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

19. Համայնքի ղեկավարի տեղակալը՝

1) համակարգում է Աշխատակազմի ստորաբաժանումների համայնքային կազմակերպությունների աշխատանքները՝ համայնքի ղեկավարի կողմից իրեն հանձնարարված բնագավառներում.
2) Աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների՝ Աշխատակազմի ստորաբաժանումներին, համայնքային կազմակերպություններին համայնքի ղեկավարի կողմից տրվող կոնկրետ հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողություն, խնդիրների գործառույթների իրականացման նպատակով Աշխատակազմի ստորաբաժանումների, համայնքային կազմակերպություններին, համայնքային ծառայողներին տալիս է գրավոր և բանավոր հանձնարարականներ և իրականացնում է դրանց կատարման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն.
3) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ և (կամ) իր նախաձեռնությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

4) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում աշխատակազմի ստորաբաժանումների, ինչպես նաև համայնքային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.
5) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.
6) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները.
7) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին.
8) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին.
9) վարչական մարմնի անունից օրենքով սահմանված կարգով հարուցում և իրականացնում է վարչական վարույթներ, վարչական գործերի քննություն, ընդունում է որոշումներ.
10) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

20. Համայնքի ղեկավարի տեղակալներից մեկը համայնքի ղեկավարի որոշմամբ, փոխարինում է համայնքի ղեկավարին՝ վերջինիս բացակայության ժամանակ:
21. Համայնքի ղեկավարը կարող է ունենալ խորհրդականներ, օգնականներ, մամուլի քարտուղար, ռեֆերենտ, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է համայնքի ղեկավարը:

22. Համայնքի ղեկավարի խորհրդականը՝

1) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմում է իր աշխատանքային ծրագիրը.
2) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում զեկուցումներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի, երևույթների ու իրադարձությունների մասին և առաջարկություններ՝ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.
3) կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.
4) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում՝ իրեն հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը.
5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ.
6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

23. Համայնքի ղեկավարի օգնականը՝

1) կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում համայնքի ղեկավարին.
2) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմակերպում է համայնքի ղեկավարի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին.
3) կազմակերպում է համայնքի ղեկավարի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը.
4) համագործակցելով Աշխատակազմի մասնագետների, ստորաբաժանումների ղեկավարների հետ՝ համայնքի ղեկավարի համար նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր.

5) նախապատրաստում և համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ աշխատանքային ծրագրերի վերաբերյալ.
6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

24. Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարը՝

1) համայնքի ղեկավարի պաշտոնական տեսակետները ներկայացնում է տեղեկատվության միջոցներին.
2) անցկացնում է ասուլիսներ և ճեպազրույցներ.
3) իր գործունեության ծրագրման և իրականացման վերաբերյալ առաջարկություններ ու վերլուծություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցնելուց հետո հետևում դրանց իրականացմանը.
4) կազմակերպում է համայնքի ղեկավարի հարցազրույցները, ասուլիսները և հանդիպումները մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների հետ.
5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հանդես է գալիս հայտարարություններով, պարզաբանումներով, հերքումներով.
6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

25. Համայնքի ղեկավարի ռեֆերենտը՝

1) իրականացնում է համայնքի ղեկավարի ելույթների և նամակների, ինչպես նաև նրա անունից նախապատրաստվող այլ փաստաթղթերի նախապատրաստումը.
2) իրականացնում է տեղեկատվական-խորհրդատվական, վերլուծական աշխատանքներ.
3) կատարում է համայնքի ղեկավարի առանձին հանձնարարականներ:

26. Ավագանին՝

1) օրենքով սահմանված հարցերով վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.
2) որոշում է Աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.
3) հաստատում է Աշխատակազմի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը.
4) սահմանում է համայնքի ղեկավարի, Աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը.
5) համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է համայնքի ղեկավարի տեղակալին,
6) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.
7) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.
8) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.
9) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, սահմանում և հաստատում է դրանց վարձավճարների և օտարման գների չափերն ու պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գները.
10) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

27. Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ օրենքով, իրավական այլ ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով,

Աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, մասնավորապես.

1) ապահովում է ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը.
2) կազմակերպում և ապահովում է աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշման նախագծերի նախապատրաստմանը.
3) ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.
4) կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.
5) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրապարակումը.
6) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.
7) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև ավագանու ընդունած՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգ հաստատելու մասին որոշմամբ.
8) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.
9) ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.
10) օրենքով, իրավական այլ ակտերով կամ աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում նշանակում և ազատում է աշխատակազմի աշխատակիցներին, այդ թվում՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
11) օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ.
12) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ.
13) Աշխատակազմի քարտուղարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

28. Աշխատակազմի գլխավոր ֆինանսիստն Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետն է:

29. *Գլխավոր ֆինանսիստը՝*

1) ղեկավարում է Աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է համայնքի ղեկավարի անմիջական հանձնարարականներով և իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով իր վրա դրված լիազորությունները.
2) իր իրավասությունների սահմաններում պատասխանատու է համայնքի բյուջեի նախապես կազմման, հաշվապահական հաշվառումը վարելու, Աշխատակազմի ֆինանսական (բյուջետային), հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների մասին հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

30. Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի կանոնադրություն,որը հաստատում է համայնքի ավագանին:

31. *Վարչական ղեկավարը՝*

1) վարչական ղեկավարի պաշտոնը համայնքային վարչական պաշտոն է.
2) վարչական ղեկավարը տվյալ բնակավայրի հաշվառված բնակիչ է.
3) վարչական ղեկավարը գործում է համայնքի ավագանու որոշած նստավայրում.
4) 1000-ից ավելի հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրի վարչական ղեկավարը պետք է ունենա բարձրագույն կրթություն.
5) համայնքի ղեկավարի որոշմամբ նշանակվում է համապատասխան բնակավայրի վարչական ղեկավարի պարտավորությունները ժամանակավորապես կատարող՝ նրա բացակայության ընթացքում.
6) վարչական ղեկավարը բնակավայրի տարածքում գործում է համայնքի ղեկավարի անունից.
7) հետևում է բնակավայրի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների իրականացմանը և այդ մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին.
8) աջակցում և կազմակերպում է իր բնակավայրում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 33-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետով, 37-րդ հոդվածով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով համայնքի ավագանուն, համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին վերապահված լիազորությունների իրականացումը.
9) համայնքի ավագանու սահմանած կարգին համապատասխան՝ անցկացնում է բնակավայրին վերաբերող հարցերի հանրային լսումներ կամ քննարկումներ և արդյունքների մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին.
10) կատարում է համայնքի բնակավայրի բնակիչների ընդունելություն, կազմակերպում է հանրային քննարկումներ և հանդիպումներ.
11) սահմանված դեպքերում և կարգով բնակավայրի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին.
12) բնակավայրի տարածքում ինքնակամ շինարարության դեպքերի հայտնաբերման, ինչպես նաև դրանք կանխարգելելու և կասեցնելու նպատակով համապատասխան տեղեկատվություն է տրամադրում համայնքի ղեկավարին, վերջինիս կողմից համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար.
13) սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված

ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ.

14) հետևում է բնակավայրի կոմունալ տնտեսության աշխատանքների իրականացմանը, ապահովում է բնակավայրում գտնվող համայնքի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը.

15) հետևում է բնակավայրի համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործմանը.

16) հետևում է բնակավայրի տարածքում աղբահանության և սանիտարական աշխատանքների կատարմանը, ինչպես նաև համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման հետ միասին կարող է համայնքի ղեկավարի հանձնարարությամբ բնակավայրի տարածքում իրականացնել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

17) օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ բնակավայրում կանխարգելում և առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին ապօրինի հողօգտագործումները կասեցնելու և վերացնելու նպատակով.

18) մասնակցում է համայնքի ավագանու նիստերին.

19) առաջարկություններ է ներկայացնում ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

20) հետևում է բնակավայրի հասարակական տրանսպորտի աշխատանքնորին և դրա վերաբերյալ պարբերաբար տեղեկություն է տրամադրում համայնքի ղեկավարին.

21) օրենքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում բնակավայրի առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում և հետևում է դրանց իրականացմանը.

22) աջակցում է բնակավայրում անասնահամաճարակային տարեկան միջոցառումների պետական ծրագրի իրականացման աշխատանքներին.

23) աշխատակազմի համապատասխան աջակցությամբ կազմակերպում է բնակավայրի համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը.

24) բնակավայրի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև ավագանու ընդունած՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին որոշմամբ.

25) բնակավայրի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և (կամ) ներգրվում է բնակավայրի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում.

26) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումը.

27) համայնքի զինապարտների գրանցամատյանի վարման նպատակով՝ համայնքի ղեկավարին է ներկայացնում բնակավայրում հաշվառված զինապարտների ցուցակները.

28) առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին՝ բնակավայրում գտնվող հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու վերաբերյալ.
29) առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին՝ բնակավայրում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարելու կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ.
30) համայնքի ղեկավարի կողմից լիազորված լինելու դեպքում համայնքի ղեկավարի անունից տալիս է բնակավայրում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվություն.
31) քաղաքացիներից և իրավաբանական անձանցից ընդունում է ՏԻՄ-երին հասցեագրված դիմումները, հայտերը, գրությունները և դրանց կից փաստաթղթերը, որոնք գրանցվում են ԿՏՀ-ում՝ որպես մտից գրություն.
32) ՀՀ կադաստրի կոմիտեից պահանջում է տեղեկատվություն և փաստաթղթեր իր բնակավայրի բնակիչներին առնչվող անշարժ գույքերի վերաբերյալ:
33) պատրաստում և դիմողներին է տրամադրում իր տրամադրության տակ եղած տեղեկատվական բազաներում առկա տվյալների վերաբերյալ համապատասխան պահանջվող տեղեկանքները, քաղվածքները, գրությունները՝ դրանք հաստատելով իր ստորագրությամբ և կնիքով:
34) իրականացնում է Աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

3.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

32. Աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքի սեփականությանը փոխանցված և (կամ) համայնքի սեփականությունը համարվող գույքից, որն Աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնվում է (ամրացվում է) ավագանու համապատասխան որոշմամբ: Աշխատակազմի գույքը ենթակա է հաշվառման նրա հաշվեկշռում:
33. Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

4. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

34. Աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը սահմանում է պետական լիազորված մարմինը:
35. Աշխատակազմի ստորաբաժանումներն, ինչպես նաև համայնքային կազմակերպություններն ունեն կանոնադրություններ, որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում են համայնքի ավագանու կողմից:

5. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

36. Աշխատակազմի բաժիններն ապահովում են համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ իրենց մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
37. Աշխատակազմի բաժինները գլխավորում են բաժինների պետերը, որոնք ենթակա և հաշվետու են համայնքի ղեկավարին, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալներին, աշխատակազմի քարտուղարին:
38. Բաժինների պետերին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժինների աշխատակիցները:
39. Աշխատակազմի յուրաքանչյուր բաժին անհրաժեշտության դեպքում օժանդակում է մյուս բաժիններին՝ իրենց կանոնադրական լիազորություններն իրականացնելու գործում:
40. Աշխատակազմի բաժինները կարող են ունենալ առանց Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի ձևաթուղթը:
41. Բաժինների պետերը՝
   1) կազմակերպում են բաժնի աշխատանքները, իրենց իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.
   2) աշխատակազմի քարտուղարին և համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալին ներկայացնում են բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում՝ բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ.
   3) անհրաժեշտության դեպքում՝ համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի և /կամ/ աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում են համայնքապետարանի և /կամ/ այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից,պաշտոնատար անձանցից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
   4) ստորագրում են իրենց բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը.
   5) համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի և /կամ/ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում են իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը.
   6) աշխատակազմի քարտուղարին ներկայացնում են առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում են բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը.
   7) կազմակերպում են քաղաքացիների դիմումների, առաջարկությունների, բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալին և աշխատակազմի քարտուղարին.
   8) համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում են խորհրդակցություններ, հանդիպումներ և ապահովում այդ խորհրդակցությունների, հանդիպումների արձանագրությունների կազմումը,

9) համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի և /կամ/ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում են այլ գործառույթներ.
10) պատասխանատվություն են կրում օրենքների և այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության պահանջները, տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

6. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

42. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների, վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:
43. Աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել ստուգման, աուդիտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:

7. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

44. Աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №129-Ա

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի վարչական շենքի (հասցեն՝ ք. Մարտունի, Շահումյան 2) 2-րդ հարկից 13.4 քմ մակերեսով թիվ 2, 46.8 քմ մակերեսով թիվ 3, 14.9 քմ մակերեսով թիվ 4 և 29.3 քմ մակերեսով թիվ 39 սենյակներն անհատույց, մշտական օգտագործման իրավունքով տրամադրել «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Մարտունու տարածքային ներկայացուցչությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №130-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան և Երևանյան փողոցների հիմնանորոգման աշխատանքների համար սահմանված տեղական տուրքի՝ շինարարության թույտվության վճարի (600000 ՀՀ դրամ) նկատմամբ սահմանել զրոյական դրույքաչափ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №131-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ 146.2 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹԻՎ 15 ՍԵՆՅԱԿՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ «ՍԵՎԱՆ» ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով «Սևան» ԳՄՀԿ Մարտունու մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենի 2025 թվականի օգոստոսի 12-ի №046 գրությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վերին Գետաշեն բնակավայրի մշակույթի տան առաջին հարկի 146.2 քմ մակերեսով թիվ 15 սենյակն անհատույց օգտագործման իրավունքով երեք տարի ժամկետով տրամադրել «Սևան» գյուղական մարզական հասարակական կազմակերպության Մարտունու մանկապատանեկան մարզադպրոցին՝ ծանրամարտի մարզումներ անցկացնելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №132-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ Ի. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-003-1076-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0255 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1 և 76-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի №286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետը, նկատի ունենալով, որ 05-003-1076-0002 կադաստրային ծածկագրով հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Ի. Խաչատրյան փողոց, 1-ին փակուղի, թիվ 6/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-003-1076-0002 կադաստրային ծածկագրով 0.0255 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ ընդհանուր օգտագործման) 20 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով:
2. Կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 8000 (ութ հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -2

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №133-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԴԻՆԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 05-062-0671-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 5.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ԵՎ 05-062-0637-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 7.9365 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1 և 76-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի №286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետը, նկատի ունենալով, որ 05-003-1076-0002 կադաստրային ծածկագրով հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող 05-062-0671-0009 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 5.0 հա մակերեսով արոտավայրը 10 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով:
2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող 05-062-0637-0002 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության

7.9365 հա մակերեսով վարելահողը 10 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №134-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.5 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽՈՏՀԱՐՔԸ, 5.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ԵՎ 2.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽՈՏՀԱՐՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» №16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջը և 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» №1477-Ն որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ՝
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.5 հա մակերեսով խոտհարքը («Նշխարք» կոչվող տարածքից) երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության:
   2) Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 5.0 հա մակերեսով

արոտավայրը («Նշխարք» կոչվող տարածքից) երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության:

3) Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2.0 հա մակերեսով խոտհարքը («Ծաղկաշեն» կոչվող տարածքից) երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -2

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №135-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-013-0303-0037 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.6008 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-013-0303-0037 կադաստրային ծածկագրով 0.6008 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը 15 (տասնհինգ) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով:
2. Հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 3000 (երեք հազար) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №136-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-034-0303-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 2.1172 ՀԱ ԵՎ 05-034-0303-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.7599 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ՝
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-034-0303-0005 կադաստրային ծածկագրով 2.1172 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը 10 (տասը) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով՝ վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանելով 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:
   2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-034-0303-0006 կադաստրային ծածկագրով 0.7599 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը 10 (տասը) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել

վարձակալության իրավունքով՝ վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանելով 9000 (ինը հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №137-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԻՆԱՐ, ԶՈԼԱՔԱՐ, ԱՍՏՂԱԶՈՐ, ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արխիվային գործի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար, Զոլաքար, Աստղաձոր, Ներքին Գետաշեն բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի և «Մարտունու մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համայնքային սեփականություն համարվող արխիվացման ենթակա արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №138-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՍՄԲԱՏ ՄՀԵՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ ԿԱՐԵՆ ՍԱՄՎԵԼԻ ԶԱԽԱՐՅԱՆԻՆ, ԷԼԵՆ ԱՐՍԵՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԵՎ ԾՈՎԻՆԱՐԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏ ԳՐԻԳՈՐ ՍԱՍՈՒՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. 2025 թվականի բռնցքամարտի Եվրոպայի կրտսեր տարիքի պատանիների առաջնությանը մասնակցած և 2-րդ տեղը զբաղեցրած՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Սմբատ Միերյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզիկներ Կարեն Սամվելի Զախարյանին և Էլեն Արսենի Բարսեղյանին Մարտունի համայնքի 2025 թվականի բյուջեից տրամադրել 100000-ական (հարյուր հազարական) ՀՀ դրամ:
2. Բուլղարիայի Հանրապետության Վառնա քաղաքում կայացած ազգային երգի միջազգային մրցույթին մասնակցած և 1-ին տեղը զբաղեցրած՝ Ծովինարի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտ Գրիգոր Սասունի Մինասյանին Մարտունի համայնքի 2025 թվականի բյուջեից տրամադրել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
3. Նկատի ունենալով, որ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված անձինք անչափահաս են, գումարները տրամադրել նրանց ծնողներին՝ Կարեն Սամվելի Զախարյանի հայր Սամվել Բաբկենի Զախարյանին, Էլեն Արսենի Բարսեղյանի

հայր Արսեն Մխիթարի Բարսեղյանին և Գրիգոր Սասունի Մինասյանի հայր Սասուն Գրիգորի Մինասյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №139-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի և 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ, հանգուցյալ Խաչիկ Սարիբեկի Խլղաթյանի անվամբ հաշվառված VOSKSWAGEN PASSAT 2.8 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 17LU441, թողարկման տարեթիվը՝ 2001 թ., հզորությունը՝ 193 ձիաուժ, նույնականացման համարը՝ WVWTH63B11P139875) գույքահարկից կուտակված 253386 (երկու հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր ութսունվեց) դրամ տույժի, VOSKSWAGEN մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 98OQ900, թողարկման տարեթիվը՝ 2004 թ., հզորությունը՝ 193 ձիաուժ) գույքահարկից կուտակված 146558 (հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր հիսունութ) դրամ տույժի և անշարժ գույքերի հարկից կուտակված 18080 (տասնութ հազար ութսուն) դրամ տույժի նկատմամբ:
2. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ Պարգև Արտակի Զիրոյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված ՎԱԶ-21061 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 34TU730, թողարկման տարեթիվը՝ 1990 թ., հզորությունը՝ 77 ձիաուժ, նույնականացման համարը՝ XTA21060M2536899) 93247 (ինսուներեք հազար երկու հարյուր քառասունյոթ) դրամ գույքահարկի և գույքահարկից կուտակված 33122 (երեսուներեք հազար

հարյուր քսաներկու) դրամ տույժի, ինչպես նաև նրա անվամբ սեփականության իրավունքով հաշվառված NISSAN TEANA 2.5 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 67ZD007, թողարկման տարեթիվը՝ 2007 թ., հզորությունը՝ 160 ձիաուժ, նույնականացման համարը՝ TNJ31-500316) գույքահարկից կուտակված 30000 (երեսուն հազար) դրամ տույժի նկատմամբ:

3. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի բնակիչ Շիրակ Գուրգենի Վարդանյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված LEXUS RX 330 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 77VV977, թողարկման տարեթիվը՝ 2004 թ., հզորությունը՝ 230 ձիաուժ, նույնականացման համարը՝ 2T2HA31UX4C013381) գույքահարկից կուտակված 284524 (երկու հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր քսանչորս) դրամ տույժի և 180000 (հարյուր ութսուն հազար) դրամ ապառքի նկատմամբ:
4. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ Կարեն Ադիբեկի Դավթյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված LEXUS LX 570 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 01MD001, թողարկման տարեթիվը՝ 2010 թ., հզորությունը՝ 381 ձիաուժ, նույնականացման համարը՝ JTJHY7AX2A4050552) գույքահարկից կուտակված 1088783 (մեկ միլիոն ութսունութ հազար յոթ հարյուր ութսուներեք) դրամ տույժի նկատմամբ:
5. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ Արամ Ռաֆիկի Մարգարյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված ISUZU TROOPER 3.5 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 13SU957, թողարկման տարեթիվը՝ 1999 թ., հզորությունը՝ 215 ձիաուժ, նույնականացման համարը՝ JACDJ58X8X7930886) գույքահարկից կուտակված 65967 (վաթսունհինգ հազար ինը հարյուր վաթսունյոթ) դրամ տույժի նկատմամբ:
6. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ Սոսե Մհերի Ավետիսյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված MERCEDES-BENZ E 350 4 MATIC մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 36DD056, թողարկման տարեթիվը՝ 2005 թ., հզորությունը՝ 272 ձիաուժ, նույնականացման համարը՝ WDBUF87J56X200853) գույքահարկից կուտակված 137819 (հարյուր երեսունյոթ հազար ութ հարյուր տասնինը) դրամ տույժի նկատմամբ:
7. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի բնակիչ Նարինե Խաչիկի Աբգարյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված MERCEDES-BENZ S-430 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 73WV773, թողարկման տարեթիվը՝ 2005 թ., հզորությունը՝ 279 ձիաուժ, նույնականացման համարը՝ WDBNG70J66A465550) գույքահարկից կուտակված 49971 (քառասունինը հազար ինը հարյուր յոթանասունմեկ) դրամ տույժի նկատմամբ:
8. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի բնակիչ Գրիգոր Ասկարամի Նազարյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված ԳԱԶ-3110 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 34OT471,

թողարկման տարեթիվը՝ 1999 թ., հզորությունը՝ 100 ձիաուժ, նույնականացման համարը՝ XTH311000X0219205) գույքահարկից կուտակված 35602 (երեսունհինգ հազար վեց հարյուր երկու) դրամ տույժի նկատմամբ:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -2

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի №140-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի երկրորդ հերթական նիստի օրը սահմանել 2025 թվականի հոկտեմբերի 31-ին, ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 26
ք. Մարտունի